նմա։ Եւ գնաց մինչև 'ի Բաբիլոն և հնազանդեցոյց զամենեսեան. և դարձաւ յԱնտիոք, 'ի Հայս, 'ի Դամասկոս, 'ի Լիբանան՝ ամենայն ծովեզերքն մինչև յԵրուսաղէմ, զորս էառ 'ի յԱրաբացւոց։ Եւ եգիտ զպատկերն Քրիստոսի 'ի Պալպաք, և զՀերան Մկրտչին Քրիստոսի, և զՀոգեթափսն Քրիստոսի։ Եւ զպատճէնս պատերազմին և յաղթութեան զրեաց թագաւորին Հայոց Աշոտոյ, և դարձաւ 'ի Սատմպօլ. և յոյժ սգայր զսպանումն Նիկիփոռայ։ Եւ բերեալ զԼասիլ և զՍոստանդին 'ի Սատմպօլ, և եղև մեծ հանդէս. յայնժամ Ամշկիկին առեալ զթագն 'ի գլխոյ իւրմէ՝ եդ 'ի գլուխ Լասլի, և երկիր եպադ նմա 'ի վերայ երկրի. և ինքն հրաժարեալ յաշխարհէ՝ գնաց յանապատ։ Ահա որ յերեկեան օրն թագաւոր, այսօր ընդ աղքատս դադարէր կամաւոր աղքատութեամբ, զի ժառանգեսցէ զերանութիւն սուրբ աւետարանին՝ և ազատեսցէ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան